ԼՂԻՄ. ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Օգոստոսի 18-ին Ստեփանակերտի հայկական պետական դրամատիկական թատրոնի շենքում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը։ Համագումար էին ներկայացել մարզի կուսակցական, խորհրդային, կոմերիտական, արհմիութենական կազմակերպություններից, քաղաքների և գյուղերի աշխատավորական կոլեկտիվներից, մարզի մտավորականներից առաջադրված 378 պատգամավորներ։ Համագումարի խորհրդանշն էր՝ «Մեր ուժը մեր միասնության մեջ է»։

Նրա նպատակն է ձևավորել ինքնավար մարզի ղեկավարման խորհուրդ՝ մինչև կառավարման սահմանադրական ձևերի վերականգնումը։

Չնայած հայտարարված էր համագումարը սկսել առավոտյան ժամը 10-ին, սակայն նշված ժամին դա հնարավոր չեղավ. Աղդամից և Լաչինից մարզի էլեկտրամատակարարումը անջատվել էր։ Բայց տեղական միջոցներով համագումարի դահլիճը լուսավորվեց, և ժամը 11-ին համագումարը բացեց համամիութենական կարգի անհատական թոշակառու Շմավոն Պետրոսյանը։

Համագումարի ղեկավար կազմ ընտրելուց հետո հաստատվեց օրակարգը. 1. Մարզում գոյություն ունեցող իրավիճակի մասին. 2. Ազգային խորհրդի ընտրություններ։

Առաջին հարցի շուրջը զեկուցումով հանդես եկավ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի անդամ, ժողվերահսկողության մարզային կոմիտեի նախագահ Վլադիմիր Թովմասյանը։ Եղույթ ունեցավ 28 մարդ։ Համագումարն ընտրեց ազգային խորհուրդ, ընդունեց որոշում և դեկլարացիա, կոչ արեց մարզի աշխատավորությանը՝ դադարեցնել գործադուլը և անցնել աշխատանքի։

Ազգային խորհրդի նախագահ ընտրվեց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, Մարտունու կուսշրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը։ Տեղակալներ ընտրվեցին Վլադիմիր Թովմասյանը, Սերգեյ Դավթյանը և Վալերի Աթաջանյանը։

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

(մեր սեփ. թղթ.)